«Առանց կուսակցական խորութեան, հայ պատգամաւորների մոցրած հարցաքննդումը Վրաստանի Խորհրդարանում՝ ազգային հալածանքների մասին, կառավարական կուսակցութեան լռութեան հետ մէկտեղ այնպիսի թշնամական վերաբերումի հանդիպեց միւս կուսակցութիւնների կողմից, որ, բնականաբար, բարոյական նուիրագործում էր գործւող խայտառակութիւնների: Իսկ ներքին գործոց նախարարի բացատրութիւնը, որը այդ ազգային հալածանքը վերածեց մի քանի անհատ պաշտօնեաների աննշան դեղծումի, չէր կարող հայ հասարակութեան վրա չթողնել ծայր աստիճանի ճնշիչ տպաւորութիւն, մանաւանդ որ այդ բացատրութեան հետևում էր վերջերս այնքան սովորական դարձած խօսքը դէպի հայ ժողովուրդը տածած յարգանքի մասին, մի խօսք, որ միայն վիրաւորում է ամենակտի հալածանքների պայմաններում ապրող ժողովրդի զգացմունքները:»:

Հայերի գլխին թափւող ապօրինութիւնների, հարստահարութիւնների ու ճնշումների մասին բազմաթիւ արձանագրութիւններ ու բողոքագրեր է կազմել Ռուսական Ազգային Խորհուրդը, որ ամենամռայլ գոյներով է ներկայացնում Թիֆլիսի հայերի այն ժամանակւայ վիճակը: Մենք զանց ենք առնում ուրիշ բազմաթիւ փաստերն ու վկայութիւնները և սահմանափակւում ենք հետևեալ երկու պերճախօս վաւերագրերով: Առաջինը Թիֆլիսի ընդհանուր նահանգապետի տւած վկայականն է ոմն Արտուշ Քէոսապապեանին: Այդ վկայականով Քէոսապապեանին իրաւունք է տրւում ազատ ապրելու Թիֆլիսում. նա «խրրև հայ, ենթակայ չէ ձերբակալութեան կամ բանտարկութեան»: (Տես նկար երես 210): Ուրեմն, վկայական չունեցող բոլոր հայերը կարող էին և՛ ձերբակալւել և՛ բանտարկւել:

Երկրորդը՝ 56 Թիֆլիսաբնակ հայ քաղաքացիների մէկ գրութիւնը, որ լոյս տեսաւ Թիֆլիսի մամուլում: «Մենք, գրում են նրանք, շարունակ լոյեալ և անպայման հանդուրժելի ենք մնացել տեղական նոր իշխանութեան վերաբերմամբ, բայց չնայած դրան, Հայաստանի և Վրաստանի միջև բախում ծագելիս՝ փաստօրէն օրէնքից դուրս և ազատութիւնից զրկւած յայտարարւեցինք նրա կողմից... Մենք չէինք կարող ռազմագերիներ լինել այն պարզ պատճառով, որ զինւորականներ չէինք: Բացի այդ՝ մենք Հայաստանի հպատակներ չենք: Մեզնից շատերը ընկնում են վրաց պարլամենտի հրատարակած հպատակութեան օրէնքի տակ և, հետևաբար, հանդիսանում են Վրաստանի հպատակներ: Ուրիշները ռուսահպատակ էին և շարունակում են իրենց համարել իրը այդպիսին: Վերջապէս, ձերբակալւածների և աքսորւածների մէջ կային և Պարսկաստանի, Թիւրքիայի և այլ հպատակներ: Մեր մէջ կային մտաւորականներ, հիւանդներ, թեազուրկներ, ոտազուրկներ, կոյրեր. կային և մինչև 75 տարեկան ծերունիներ ու 15—16 տարեկան երեխաներ:

Մեզ ո՛չ մի մեղադրանք չներկայացւեց ձերբակալելիս և ձերբակալութիւնից յետոյ: Մեզ հարցրին միայն՝ «Դուք հա՞յ էք» — և այդ բաւական էր: Մեզ, առաջին հանդիպող պատահական անձերիս, որ մտել էինք կոմիսարիատ՝ մեծ մասամբ այլ գործով — տուրքեր վճարելու, զանազան տեղեկութիւններ ու թոյլտւութիւններ ստանալու համար — խլեցին մեր ընտանիքից և պարապմունքներից և թոյլ չտալով հրաժեշտ տալ մերձաւորներին, կամ վերցնել ամենից անհրաժեշտ առարկաներն ու որև է կարգադրութիւններ անել — ուղարկեցին յայտնի չէ՝ ինչ պատճառով, յայտնի չէ՝ ուր, յայտնի չէ՝ ինչ պայմանաժամով...